Դավթյան Էրիկ
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 2-րդ կուրս
էլ. փոստ՝ komitas2010@gmail.com

ՑԵՂԱԿՐՈՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Լինելով Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպիչ և ոչ միայն՝ Գարեգին Նժդեհը իսկապես հսկայական աշխատանք է ծավալել և շատ բան է արել հայ ազգի համար: Նույնիսկ 1921 թ., երբ թողեց Հայաստանի սահմանները, չդադարեց մտածել իր ժողովրդի մասին և

[1] Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ, գլ. Ե:
[2] Նույն տեղում:

Հայաստանի սահմաններից հեռու՝ շարունակեց իր ազգանվեր գործը: Գարեգին Նժդեհի հսկայածավալ ու եռանդուն գործունեության անբաժան մասն է կազմել ցեղակրոն շարժումը, որը հենց ուղղված էր փրկելու հազարավոր հայերի ուծացումից ու ամերիկյան ամենակուլ միջավայրի ազդեցությունից:

Այժմ ներկայացնենք ցեղակրոն շարժման պատմությունը: 1932 թ. Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում լույս տեսնող «Խռովք» ամսագրում Նժդեհը լույս ընծայեց «Ցեղակրօնութիւնն իբրեւ յաղթանակի զօրոյթ» հոդվածը՝ «Հոգեւոր նորոգութեան խնդիրներ» խորագրի տակ, որը եկավ ավետելու այն գաղափարը, որ ցեղակրոնությունը հայ ժողովրդի փրկությունն է և հզոր գործիքը նրա ձեռքում[1]: 1933 թ. ամռանը Նժդեհը ՀՅԴ 12-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ մեկնում է ԱՄՆ, որտեղ և նախաձեռնում է ցեղակրոն շարժումը՝ սկիզբ դնելով նաև ցեղակրոն ուխտերին[2]: Նա մարդկանց քարոզում էր այն գաղափարը, որ հայերը պետք է լինեն ցեղի հպատակները՝ անկախ այն բանից, թե որտեղ են և ինչ դիրք ունեն: Մեկնելով ԱՄՆ՝ նա միավորեց այնտեղ գործող հայկական կազմակերպությունները («Հայորդիք», «Որդիք Հայաստանեայց» և այլն) և կազմակերպեց նրանց միասնական գործունեությունը[3]:

Գարեգին Նժդեհի բուռն գործունեության շրջանում 1933 թ. հուլիսին կազմակերպվեց ցեղակրոն ուխտերի ներկայացուցչական ժողովը, որից հետո կազմակերպությունը մոտ մեկ տարի գործեց չեզոք կարգավիճակով: 1934 թ. հունիսին Բոստոնի «Հայրենիք» ակումբի սրահում Նժդեհի գլխավորությամբ բացվեց ցեղակրոն ուխտերի առաջին Պատգամավորական ժողովը, որը որոշեց մտնել Դաշնակցության դրոշի տակ և այսուհետ սկսեց կոչվել ՀՅԴ ցեղակրոն ուխտեր[4]:

Ինչ վերաբերում է ցեղակրոն ուխտերի կառուցվածքին, ապա այն ուներ Ծրագիր-Կանոնագիր և «Հաւատամք», որը բաղկացած է 23 կետից[5]: Ծրագիր-Կանոնագրի պաշտոնական նպատակն էր. «Ստեղծել ցեղակրոն սերունդ մը, որին սերունդները ապրին և գործեն որպես ցեղի հպատակն ու մարտիկը, ուր որ էլ լինեն եւ ընկերային ինչ դիրք էլ ունենան»[6]: Կազմակերպության միավորը ուխտն էր, որն ուներ առնվազն 7 անդամ: Ղեկավար մարմինը Կենտրոնական վարչությունն էր, որն ընտրվում էր Պատգամավորական ժողովի կողմից, իսկ վերջինն էլ գումարվում էր տարին մեկ անգամ: Ուխտերը կազմակերպում էին

[1] Ամբողջական հոդվածը տե՛ս Նժդեհ Գ., Հատընտիր, Ցեղակրոնությունն իբրեւ յաղթանակի զօրոյթ, Երևան, 2001, էջ 316-324:
[2] Տե՛ս նույնի, Ցեղակրոն շարժումը, Երևան, 2002, էջ 21:
[3] Տե՛ս Գարեգին Նժդեհի ուսմունքը և արդիականությունը, Երևան, 2010, էջ 110-135:
[4] Նժդեհ Գ., Ցեղակրոն շարժումը, էջ 23:
[5] Հավատամքը ամբողջությամբ զետեղված է նույն տեղում, էջ 23-25:
[6] Տե՛ս Նժդեհ Գ., Ցեղակրոն շարժումը, էջ 21:

հավաքներ, ասուլիսներ հայոց պատմության վերաբերյալ, որոնք նպատակ ունեին հասնել ցեղային ինքնաճանաչմանը, ինչպես նաև մարզանք, զբոսանք և այլն: Բնականաբար հավաքույթները կազմակերպվում էին հայերեն: Ուխտերի ներսում գործում էր խիստ կարգապահություն և «Բոլորը մեկի եւ մեկը բոլորի համար» սկզբունքը: Ուխտերը սերտ հարաբերություններ էին հաստատել Հայկական Կարմիր Խաչի, ՀՅԴ Ուսանողական միության հետ:

Կազմակերպությունում նշվում էին երկու կարևոր տոներ՝ Ցեղակրոնության օր (հունվարի 14) և Դրոշակի օր (օգոստոսի 10): Խորհրդանշանը առյուծն էր: «Հառաջ, նահատակ» երգը ժամանակավորապես ընդունվեց իբրև քայլերգ, իսկ «Հայրենիք» շաբաթաթերթը՝ որպես ցեղակրոնների օրգան, որը սկսեց հրատարակվել 1934 թ. և նպատակ ուներ գոնե անգլերենով հայերին ծանոթացնել հայ պատմությանը, մշակույթին՝ նրանց ետ պահելով ձուլումից:

ԱՄՆ-ում ցեղակրոն շարժման կենտրոնը Բոստոնն էր. դրանք գործում էին նաև Չիկագոյում, Դետրոյտում, Ֆրեզնոյում, Բուլղարիայում (Սոֆիա, Պլովդիվ, Վառնա, Բուրգաս), Հունաստանում, Ֆրանսիայում, Ռումինիայում: Նժդեհը դրանք ուխտեր է անվանել, որովհետև ուխտ բառը կարծես թե պարտավորեցնող է և մարդուն մղում է մի վեհ նպատակի, ստիպում նրան պարտական լինել հայրենիքին և մշտապես ծառայել նրան: Ինչպես ասել է հենց Նժդեհը, այդպիսի մի ուխտ է եղել «Դաւիթբեկեան ուխտը», որն իր արդյունքն է տվել Զանգեզուրի հերոսամարտի ժամանակ: Նժդեհը բազմիցս նշել է, որ ցեղակրոն շարժումը կուսակցություն չէ, դա ուխտ է, ինչպես, օրինակ, Մամիկոնեից ուխտը[1]:

1934 թ. աշնանը Գարեգին Նժդեհը գալիս է Բուլղարիա՝ ցեղակրոն շարժումը ավելի ընդլայնելու: Նա նպատակ ուներ այն դարձնել համահայկական շարժում: Ցեղակրոն շարժումը Նժդեհի դեմ է հանում Դաշնակցությանը: Դաշնակցությունը 1938 թ. որոշմամբ, առանց Նժդեհի ներկայության, նրան հեռացնում է կուսակցության շարքերից[2]: Այս հանգամանքը չէր կարող չանդրադառնալ նաև ցեղակրոն շարժման հետագա գործունեության վրա: Շարժումը ԱՄՆ-ում աստիճանաբար սկսում է անկում ապրել: 1941 թ. հուլիսին Չիկագոյում գումարված Ցեղակրոն Ուխտերի 8-րդ Պատգամավորական ժողովը որոշեց կազմակերպությունը վերանվանել «Ամերիկայի հայ երիտասարդաց դաշնակցություն»: Վերանվանման կեղծ բացատրությունը այն էր, որ ամերիկացիների շրջանում լուրեր տարածվեցին այդ շարժման նացիստական բնույթի

[1] Տե՛ս նույնի, Հատընտիր, Ինչու ստեղծվեց ցեղակրոն շարժումը, Երևան, 2001, էջ 313:
[2] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, Երևան, 2011, 12 փետվարի, էջ 4:

մասին և որ հայերը օտարերկրացիներին չէին կարողանում բացատրել, թե ինչ է «ցեղակրոնը»[1]:

Իսկ ինչ վերաբերում է այլ պետություններին, ապա Ցեղակրոն շարժումը ուժեղ ազդեցություն ուներ Բուլղարիայում, որտեղ այդ անունով կազմակերպությունները գործեցին մինչև 1944 թ. Նժդեհի ձերբակալությունը:

Իրականում ինչ էր ցեղակրոնությունը: Իհարկե միանգամից դա առաջանալ չէր կարող: Դրա հիմքը կարող ենք համարել 19-րդ դ. հայ գրողների արտահայտած գաղափարները: Ճիշտ է՝ դրանք գաղափարներ էին, բայց Նժդեհը, դրանք ամփոփելով, ստեղծեց ազգային գաղափարախոսություն: Ցեղակրոնությունը հայի էության և բարոյականի վրա կառուցված ուսմունք է, որի նպատակը, առաջին հերթին, հայ ծնված լինելու գիտակցումն ու հպարտությունն է, այդ ծնունդին անմնացորդ նվիրվելու և ցմահ հավատարիմ մնալու ուխտն է, իսկ ցեղը՝ «յաւիտենական հայը, Աստծոյ գործակիցը»: Ցեղակրոնությունը և տարոնականությունը, ըստ էության, նույն բանն են, միայն այն տարբերությամբ, որ տարոնականությունը հասակն առած սերնդի համար էր:

Ցեղակրոնության կարևորագույն սկզբունքները հետևյալն են՝

1. մեր դժբախտությունների համար մեղավոր ենք նախ և առաջ մենք,
2. մեզ պետք եղած ուժը փնտրենք մեր մեջ:

Ցեղակրոնության սկիզբը Նժդեհը համարում է ճանաչողությունը, ուստի պատահական չէ, որ նա հայ ժողովրդի սուրբ գիրք է համարում «Հայոց Պատմությունը», այսինքն՝ «ցեղի կեանքի գիրքը»[2]: Ցեղակրոնությունը քարոզում է հային ճանաչել իր ցեղը՝ որպես իրեն ծնող հավաքականություն: Նժդեհը ցեղը դիտում է որպես գերագույն ծնող, իսկ ընտանիքը՝ ցեղի հզորացման միջոց:

Ցեղակրոնության մասին խոսելիս անհրաժեշտ և պետք է անդրադառնալ ցեղապաշտությանը, որը համարվում է ցեղի արժեքների ու սրբությունների պաշտամունք, որի մեջ մտնում են հայրենապաշտությունը (այն հողի, որի վրա առաջացել է հայ ցեղը), արյան պաշտամունքը («ցեղի արյունը աստվածություն է»), լեզվի պաշտամունքը («լեզվի մահը արագացնում է ժողովուրդների հոգևոր մահը»), զոհապաշտությունը, նախնիապաշտությունը («չի կարելի խզել հոգևոր կապը հին ու նոր սերունդների միջև»), ուժապաշտությունը («աշխարհը ճանապարհ է տալիս ուժեղներին»), առաջնորդապաշտությունը («ցեղի ճշմարիտ առաջնորդների»):

Ցեղակրոնությունը հային հայրենատեր դարձնելու կամքն է, օտարությունից երկիր դարձի ուխտն է: Այն նպատակ ունի ստեղծել

[1] Այս մասին տե՛ս Նժդեհ Գ., Ցեղակրոն շարժումը, էջ 28:
[2] Տե՛ս նույնի, Հատընտիր, Ինչու ստեղծվեց ցեղակրոն շարժումը, էջ 314-315:

ցեղի կարողություններն ու առաքինությունները դրսևորելու նպաստավոր պայմաններ: Ցեղակրոնություն կարող է ապահովել միայն ցեղակրոն մարդը: Ցեղակրոնը, ըստ Նժդեհի, չպետք է վախենա միջավայրի կործանիչ ազդեցությունից, քանի որ դրանք անզոր ու տկար են ցեղամարդու առջև: Այսինքն՝ եթե մենք ժայռ ենք, քամին մեզ ոչինչ չի կարող անել: Ցեղակրոն մարդու համար աններելի բան է վախկոտությունը: Ցեղակրոնը պետք է գիտակցի, որ գալիք սերունդների ճակատագիրը իր ձեռքերում է, ուստի նա պետք է պարտք ու պարտականություն ունենա նրանց առջև: Խոսքը վերաբերում էր հատկապես երիտասարդներին: Նժդեհն ասում էր. «Ես ճշմարտութիւններ գիտեմ, որոնցից մէկն ասում է՝ ուզում ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան, նայի՛ր նրա երիտասարդութեանը»[1]:

Ցեղակրոն շարժումը նպատակ ուներ փրկել օտար հողում ապրող հայերին կործանարար և բարոյազրկող ամերիկյան շրջապատից ու հասարակությունից: Իսկ այն հարցի պատասխանը, թե ինչու շարժումը հիմնադրվեց հենց Ամերիկայում, միանշանակ այն է, որ այդտեղ ստեղծվել էր հայ ամենամեծ համայնքը (մոտ մեկ միլիոն): Հայ համայնքներում ստեղծվել էր խիստ անբարենպաստ միջավայր, ուր տիրում էր պարտվողական վիճակ[2]: Հայերը ամաչում էին հայ լինելուց, ամենուր ցանկանում էին քողարկել դա, իսկ Ցեղակրոն շարժումը եկավ բարձրացնելու հայերի ինքնագիտակցությունը և ինքնաճանաչողությունը, որ մարդիկ հպարտ լինեն, որ իրենք հայ են: Դրան գումարվում էին հայկական կուսակցությունների երկպառակտչական գործունեությունն ու անդադար կռիվները. նրանք սկսում էին նահանջել Հայկական հարցից, կարծես հաշտվել էին Լոզանում Հայկական հարցի ճակատագրի և հատկապես այն մտքի հետ, որ մենք կորցրինք Արևմտյան Հայաստանը, և պետք է մերձենալ թուրքերի հետ[3]: Բացի այդ՝ ուժեղ հակահայկական քարոզչություն էին իրականացնում թուրքերը, մի բան, որը չունեին հայերը: Քարոզչության թույլ լինելու կամ գրեթե բացակայության պայմաններում աշխարհը սկսեց սխալ ճանաչել հայերին, նրանց մշակույթը ու պատմությունը: Ցեղակրոնությունը եկավ վերացնելու այդ բացը: Թուրքերի համառ ջանքերի և վարձատրության պատճառով մի շարք հասարակական գործիչներ Եվրոպայում սկսեցին վատաբանել ու բոլորովին այլ կերպ նկարագրել հայ ժողովրդին[4]:

Ցեղակրոն շարժումը նաև նպատակ ուներ հարստացնել հայ ժողովրդի հոգևոր աշխարհը: Միևնույն ժամանակ այն փորձում էր ամեն կերպ դուրս գալ բոլշևիզմի դեմ՝ այն համարելով հայերի ամենաո-

[1] Տե՛ս նույնի, Հատընտիր, էջեր իմ օրագրէն, Երևան, 2001, էջ 31:
[2] Նույնի, Ինչու ստեղծվեց ցեղակրոն շարժումը, էջ 312-315:
[3] Նույն տեղում, էջ 314:
[4] Տե՛ս Նժդեհ Գ., Ցեղակրոն շարժումը, էջ 22:

խերիմ թշնամիներից մեկը և հանել ժողովրդի միջից: Ցեղակրոն շարժումը, որն ստեղծվել էր արտասահմանում, գործում էր նախ և առաջ սփյուռքահայերին դարձի բերելու ու փրկելու համար՝ նպատակ ունենալով Ցեղակրոն Ուխտերը դարձնել աշխարհի հայ նոր սերնդի ընդհանուր կազմակերպության հիմքը:

Ցեղակրոն շարժումը ուներ մարտավարական նշանակություն՝ հայ ժողովրդի ինքնագիտակցության, ինքնաճանաչման, գաղափարական դիմագծի, աշխարհընկալման, ազգային գաղափարախոսության ձևավորում, սեփական անցյալի իմաստավորված ընկալում և արված հետևություններով ապագայի ճիշտ կառուցում[1]: Այն եկավ միավորելու հայ ժողովրդի անցյալը, ներկան ու ապագան: Նժդեհը քարոզում էր այն, ինչը ճիշտ ուղի էր համարել նաև Եղիշե Չարենցը. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Ցեղակրոնությունն է հայ զենքի ու ոգու հաղթանակի գրավականը: Այն պահանջում է հաղթանակ, հաղթել ապրելու և ցեղը ապրեցնելու համար[2]:

Ցեղակրոն շարժումը ուղղված էր նախ և առաջ սփյուռքահայ երիտասարդությանը, նրան իր ազգային արմատներին բերելուն և ճիշտ ուղուն դարձնելուն: «Եթէ դու չես- թող խոստովանիմ՝ գաղութներում միայն քեզ եմ հաւատում- եթէ չես կամ չպիտի դառնաս ճանապարհ փրկութեան մեր ժողովրդի համար, նրա համար կը մնայ մի հատիկ ճամփայ... դէպի գերեզմանատուն»[3]: Նժդեհը մեծ կարևորություն է տալիս հայկական դպրոցների ճիշտ գործունեությանը և մանկավարժությանը: Դրանք պետք է պատված լինեն հայրենասիրությամբ, ուր հայոց պատմությունը պետք է նկարագրվի յուրովի, ոչ թե, օրինակ, համաշխարհային պատմության նման[4]:

Ցեղակրոնության ոխերիմ թշնամին է կուսակցամոլությունը. «Կուսակցամօլը – դա թշնամին է իր ժողովրդի, բարեկամը՝ իր ժողովրդի թշնամիներու»[5]: Կուսակցությունները, անիմաստ պայքարի մեջ մտնելով իրար դեմ, մոռանում են իրենց առջև դրված խնդիրների և արտաքին քաղաքական հարցերի լուծման անհրաժեշտության մասին, իսկ դրանից շտապում է օգտվել թշնամին, որը մշտապես մոտ է:

Ցեղակրոնությունը արդի նշանակություն ունի նաև ներկայիս Հայաստանի Հանրապետությունում: Նույն խնդիրները այսօր դրված են նաև մեր առջև, որոնք լուծում են պահանջում[6]: Հայության առջև դրված խնդիրները՝ մինչև հայ պահանջատիրության հարցը, գոյություն ունեն

[1] Տե՛ս Գարեգին Նժդեհի ուսմունքը և արդիականությունը, էջ 110:
[2] Նույն տեղում, էջ 113:
[3] Տե՛ս Նժդեհ Գ., Հատընտիր, Որդիների պայքարը հայրերի դէմ, էջ 78:
[4] Դպրոցների ու մանկավարժության մասին առավել մանրամասն տե՛ս նույն տեղում, էջեր իմ օրագրէն, էջ 57:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 42:
[6] Գարեգին Նժդեհի ուսմունքը և արդիականությունը, էջ 135-141:

մինչ այժմ: Նժդեհի թվարկած ներպետական խնդիրները առաջնային նշանակություն ունեն: Օրինակ՝ դպրոցներում տիրող վիճակը գոյություն ունի առ այսօր. անհրաժեշտ է ստեղծել այնպիսի դպրոցներ, որոնք հայրենասիրական շունչ հաղորդեն հայ մանուկներին և այլն:

Ամփոփելով ցեղակրոնության գաղափարները՝ գալիս ենք այն եզրակացության, որ ցեղակրոնությունը դրական է բոլոր հայերի համար: Եթե մենք ուզում ենք կերտել հզոր ու միասնական պետություն և լուծել մեր առջև դրված արտաքին քաղաքական խնդիրները՝ ընդհուպ մինչև հայկական բոլոր հողերի վերադարձը, կարող ենք առաջնորդվել Գարեգին Նժդեհի ցեղակրոնության գաղափարներով: Մենք միշտ պետք է հիշենք մեծն Նժդեհի հետևյալ խոսքերը. «Եթէ այսօր մեր ժողովուրդը հարուածներ է միայն ստանում եւ ողբերգօրէն՝ անկարող է հակահարուածել- դրա պատճառն այն է, որ նա չի ապրում ցեղօրէն»:

Annotation

This research presents the beginning of the movement "Tseghakron" (word by word from Armenian- "bearer of the national spirit"), the history and the structure. A great consideration is given to the reasons of the origin, to the necessity and the importance. The research shows the essence and the main issues of the movement "Tseghakron", as well as the actuality of the theme in the Republic of Armenia.

Аннотация

В данной работе представляется начало движения "Цегакрон" (дословно с армянского – носитель национального духа), его история, идеология и структура. Большое внимание уделяется причинам возникновения этого движения, его исторической необходимости. Работа показывает сущность движения "Цегакрон", представленные им вопросы, связь с современной реальностью и актуальность в Республике Армении.